

Կ Ա Ր Գ

ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նոր խմբագրությամբ

I. Ընդհանուր դրույթներ.

1. «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի և 17-րդ հոդվածի չորրորդ մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.5 կետի 21 և 22 ենթակետերի պահանջներին համապատասխան, սույն կարգը սահմանում է հավակնորդների մուտքի վճարների, փաստաբանների անդամավճարների, փաստաբանի օգնականի վճարների վճարումների և արտոնությունների սահմանման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը պարտադիր է բոլոր հավակնորդների, փաստաբանների, փաստաբանի օգնականների և Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանների համար:

3. Սույն կարգով նախատեսված վճարումները կատարվում են կանխիկ (Պալատի գանձապահին) կամ անկանխիկ (բանկային փոխանցմամբ):

4. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

- **Պալատ** – Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ.
- **կարգ** – սույն կարգը.
- **հավակնորդ**– Պալատի որակավորման հանձնաժողովի կողմից վկայագիր ստացած իրավաբան.
- **օգնական** – փաստաբանի օգնական:

II. Հավակնորդների կողմից մուտքի վճարների վճարման կարգը.

5. Հավակնորդը մուտքի վճար վճարելու պարտականություն է ձեռք բերում՝ փաստաբանի արտոնագիր ստանալու դիմումը ներկայացնելու պահից մինչև իր հարցի օրակարգով հրավիրված Պալատի խորհրդի նիստի օրվան նախորդող օրը, բացառությամբ Կարգի 6-րդ կետում նշված դեպքի: Պալատի խորհրդի

կողմից հավակնորդի՝ փաստաբանի արտոնագիր ստանալու մասին դիմումը մերժելու դեպքում, կատարված մուտքի վճարը տասնօրյա ժամկետում վերադարձվում է հավակնորդին՝ դիմումում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու եղանակով:

6. Այն դեպքում, երբ հավակնորդը հնարավորություն չունի միանվագ վճարելու Պալատի խորհրդի կողմից սահմանած մուտքի վճարը, ապա կարող է պատճառաբանված միջնորդություն ներկայացնել Պալատի խորհրդին՝ մուտքի վճարը տարաժամկետելու վերաբերյալ: Կախված հավակնորդի միջնորդության հիմնավորվածությունից և հավակնորդի գույքային դրության վերաբերյալ կցված ապացույցներից, Պալատի խորհուրդը կարող է մինչև վեց ամսով տարաժամկետել մուտքի վճար վճարելու պարտականությունը, այդ թվում՝ տարաժամկետված ամսով գումարները համամասնորեն միացնել հավակնորդի կողմից ապագայում վճարվող ամսական անդամավճարներին: Սույն կետում նշված դեպքում, Պալատի և հավակնորդի միջև կնքվում է համապատասխան համաձայնագիր, որում սահմանվում է մուտքի վճարի տարաժամկետման գրաֆիկը, ինչպես նաև հետևյալ պայմանն առ այն, որ հավակնորդի կողմից կատարվող այլ վճարումներով (անկախ փոխանցման/վճարման նպատակից) առաջնահերթ մարվելու են ժամկետանց մուտքի վճարները:

III. Փաստաբանի անդամավճարի վճարման կարգը.

7. Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

8. Առաջին անդամավճարի վճարման պարտականությունը փաստաբանի մոտ ծագում է Պալատի խորհրդի՝ Պալատի կազմում անդամագրելու և փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու որոշման ընդունման ամսվանից, բացառությամբ Կարգի 9-րդ կետում նշված դեպքերի:

9. Այն դեպքում, երբ փաստաբանի մոտ առաջ է գալիս ոչ լրիվ ամսվա համար վճարելու հարց (կապված արտոնագիր տրամադրելու, արտոնագրի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու կամ վերսկսելու, ինչպես նաև անդամավճարներ վճարելուց լրիվ կամ մասնակի ազատելու հետ), ապա համապատասխան ոչ լրիվ ամսվա համար վճարումը կատարվում է տվյալ ամսվա ընթացքում արտոնագրի գործողության՝

- 1-ից 6 օրերի համար՝ ամսական անդամավճարի 1/5-րդը,
- 7-ից 12 օրերի համար՝ ամսական անդամավճարի 2/5-րդը,
- 13-ից 18 օրերի համար՝ ամսական անդամավճարի 3/5-րդը,
- 19-ից 24 օրերի համար՝ ամսական անդամավճարի 4/5-րդը,
- 24-ից ավելի օրերի համար՝ անդամավճարի լրիվ չափով:

9.¹ Այն դեպքում, երբ փաստաբանի հետ կնքվել է մուտքավճարի կամ անդամավճարի տարաժամկետ վճարման համաձայնագիր, ապա փաստաբանը պետք է վճարումը կատարի համաձայնագրում նշված ժամկետում և կարգով: Նշված համաձայնագրով նախատեսված հերթական գումարի (այդ թվում՝ անդամավճարի մի մասի) վճարումը 5 (հինգ) օրից ավել կետանցելը (ուշացնելը) համարվելու է անդամավճարի վճարման պարտականության խախտում:

(կեպը լրացվել է 01.04.2016թ. թիվ 09/16-L որոշմամբ)

9.² Այն դեպքում, երբ փաստաբանը Պալատի ներքին իրավական ակտով սահմանված կարգով ազատված է անդամավճար վճարելուց կամ վերջինիս փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դադարել է և անդամավճար վճարելուց ազատման կամ արտոնագրի գործողության դադարման օրվա դրությամբ փաստաբանն ունի անդամավճարի անհուսալի դեբիտորական կետանցված պարտավորություն, ապա Պալատն իրավասու է օրենքով սահմանված կարգով փաստաբանի անհուսալի դեբիտորական պարտավորությունը (պարտքը) դուրս գրել՝ կետանցված դառնալու 366-րդ օրվանից: Սույն կետով նախատեսված հիմքով անհուսալի դեբիտորական պարտավորությունը (պարտքը) դուրս գրելու մասին որոշում է կայացնում Պալատի խորհուրդը:

(կեպը լրացվել է 23.10.2018թ. թիվ 19/8-L որոշմամբ)

IV. Փաստաբանի օգնականի վճարների վճարման կարգը.

10. Օգնականի կարգավիճակ հավակնող անձը մուտքի վճարը կատարում է նախքան Պալատի խորհրդին արտոնագրման մասին դիմում ներկայացնելը: Պալատի խորհրդի կողմից օգնականի՝ արտոնագրման դիմումը մերժելու դեպքում, կատարված մուտքի վճարը տասնօրյա ժամկետում վերադարձվում է օգնականին՝ դիմումում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու եղանակով:

11. Օգնականները յուրաքանչյուր ամսվա համար ամսական վճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

12. Այն դեպքում, երբ օգնականի մոտ առաջ է գալիս ոչ լրիվ ամսվա համար վճարելու հարց, ապա համապատասխան ոչ լրիվ ամսվա համար վճարումը կատարվում է հետևյալ կերպ՝ եթե օգնականի արտոնագիրը գործել է տվյալ ամսվա տասնհինգ օրերից ավելի ժամանակահատվածում, ապա վճարվում է ամբողջ ամսվա գումարը, իսկ եթե՝ ոչ, ապա այդ ամսվա համար գումար չի վճարվում:

V. Արտոնությունները.

13. Պալատի նախագահի որոշմամբ անդամավճարի վճարումից դիմումի հիման վրա կարող է ազատվել հետևյալ կին փաստաբանը՝

ա) հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև ծննդաբերությունը՝ համապատասխան բժշկական փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ լրիվ անդամավճարի մասով (անդամավճար չի վճարում):

բ) ծննդաբերությունից հետո մեկ տարի ժամանակով՝ երեխայի ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ լրիվ անդամավճարի մասով (անդամավճար չի վճարում):

գ) երեխայի մեկ տարեկանից մինչև երեք տարեկանը ժամանակով՝ երեխայի ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ անդամավճարի 3/5-րդ մասով (վճարում է անդամավճարի 2/5-րդ մասը):

Սույն կետի «ա», «բ» կամ «գ» ենթակետերում նշված արտոնությունները կարող են կիրառվել միայն դիմումի հիման վրա՝ դիմումի օրվանից հետո ընկած համապատասխան ժամանակահատվածի համար, եթե փաստաբանը

անդամավճարի գծով պարտք չունի և այլ բան նախատեսված չէ սույն կարգի 13-րդ կետով:

Եթե փաստաբանը օգտվել է սույն կետի «ա» ենթակետում նշված արտոնությունից, և երեխայի ծննդյան կապակցությամբ դիմում է «բ» կետում նշված արտոնությունից օգտվելու համար, ապա՝

- արտոնությունը կիրառվում է երեխայի ծննդյան օրվանից հաշված, եթե դիմումը և ծննդյան վկայականը ներկայացվել է երեխայի ծննդյան օրվանից երեք ամսվա ընթացքում.

- արտոնությունը կիրառվում է դիմումը ներկայացնելու օրվանից, եթե դիմումը և ծննդյան վկայականը ներկայացվել է երեխայի ծննդյան օրվանից երեք ամիսը լրանալուց հետո:

Սույն կետի «բ» ենթակետում նշված արտոնության հարցով ներկայացված դիմումի մեջ փաստաբանը կարող է միաժամանակ խնդրել կիրառել նաև «գ» ենթակետում նշված արտոնությունը:

(կեղը փոփոխվել է 01.04.2016թ. թիվ 09/16-Լ որոշմամբ)

14. Պալատի խորհրդի առանձին որոշմամբ արտոնություններ կարող են տրամադրվել հետևյալ փաստաբաններին (ընդ որում, որպես կանոն, դիմումները քննարկվում են Պալատի խորհրդի կողմից միայն անդամավճարների գծով պարտքի բացակայության դեպքում)՝

ա) երկարատև (մեկ տարուց ավել) հիվանդության մեջ գտնվող փաստաբանին՝ հիվանդության տևողության ժամանակահատվածով անդամավճարի կամ ամենամյա պարտքը զիջելու ձևով՝ Պալատի խորհրդին պարտքը զիջելու մասին դիմում և առողջական վիճակը հավաստող համապատասխան բժշկական փաստաթղթեր ներկայացնելու դեպքում,

բ) բացառիկ դեպքերում երկրորդ կարգի հաշմանդամին՝ անհատական մոտեցման սկզբունքով՝ դիմում և հաշմանդամության կարգը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

Սույն կետի «բ» ենթակետում նշված արտոնությունը չի կարող տրվել անդամավճարի 3/5-րդ մասից ավել:

15. Կարգի 13-րդ և 14-րդ կետերի արտոնություններից կարող է օգտվել նաև փաստաբանի օգնականը:

16. Կարգապահական պատասխանատվության ենթակա չեն առաջին անգամ մինչև երեք ամսվա անդամավճար չվճարած փաստաբանները, եթե չորրորդ ամսում ամբողջությամբ վճարել են անդամավճարները: Սույն կետում նշված չորրորդ ամսում կրկին անդամավճար չվճարելու, ինչպես նաև հետագայում որևէ ամսին անդամավճար վճարելու պարտականությունը խախտելու յուրաքանչյուր դեպքում, փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Սույն կետում նշված մոտեցումը տարածվում է նաև օգնականների վրա:

17. Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա

է կարճման: Փաստաբանի կողմից անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց հետո պարտքի մարման հիմքով:

Սույն կետում նշված մոտեցումը տարածվում է նաև օգնականների վրա:

VI. Եզրափակիչ դրույթներ

18. Փաստաբանը և օգնականը, որոնք սահմանված ժամկետում չեն կարող վճարել ամենամսյա վճարը պարտավոր են պատճառների մասին գրավոր տեղյակ պահել Պալատի նախագահին:

19. Փաստաբանի կամ օգնականի կողմից փաստացի գործունեություն չիրականացնելը չի կարող հիմք հանդիսանալ ամենամսյա վճարների վճարումից ազատելու համար:

20. Փաստաբանի կամ օգնականի արտոնագիրը դադարեցնելու դեպքում, նախկինում կատարված վճարումները վերադարձման ենթակա չեն:

21. Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

22. Փաստաբանի մուտքի վճարների, անդամավճարի, հավակնորդի մուտքի վճարների, օգնականի մուտքի վճարների և ամսական վճարների չափերը սահմանող Պալատի խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում կայացման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

23. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից: Այդ պահից ուժը կորցրած է ճանաչվում Պալատի խորհրդի կողմից 02.05.2012 թվականին թիվ 15/23-Լ որոշմամբ հաստատված «Մուտքի վճարների, անդամավճարների և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգը»:

24. Սույն կարգում փոփոխություններ կամ լրացումներ կարող է կատարվել Պալատի խորհրդի որոշմամբ: